

նման ուր որ գնում է հոտ է հանում, լաւ մարդ էր իւր քաղաքն է՞ր շէր նստեր, այդ չափ որ ի այդ ա(ւր)հնեալ քաղաքը դարչահոտում է:»

«Դարձե(ա)լ ծանիք հոգեւոր որդիք, զինչ այդ տեղդ կ'անցնի մեզ շէք գրել ի յայլմէ կու լսեմք: Ի յա(ստուծո)յ ատելի Բարսղին հաջմունքն, ի Ջուղայոյ ինձ քօմարք կու գրեն: Իւրն եւս թուղթ գրեցի, թէ չկորչի ինձ գըրեք: Տ(է)րն ամ(ենայն)ի պահեսցէ ըզձեզ անփորձ յամ(ենայն)չար հոգւոյ եւ մարմնոյ: Ամէն. գրեցաւ թուին ՌձԻէ (1678) սեպտեմբերի ամսոյ ԻԸ (28), ի յԱրզուրում քաղաքի:»

(Աջ լուսանցքին, գրչէն)

«Դ(ա)րձե(ա)լ ծանիք հոգեւոր որդի մահաբախ Մինաս, ա(ստու)ծ եղբարք եւ որդիքդ անփորձ պահէ յամ(ենայն) վտանգէ որ բարով վայելեն իւրեա(ան)ց այդիքն որ դու աշխատանօք եւ հոգ(ա)ցե(ա)լ: Միւրելի որդի քոյ այդին այդ է որ սիրով աշխատես, ա(է)ր առաջնորդէ յերբ պտուղն հասնի, գնա ի դուռն ս(ուր)բ էջմիածն(ո)յս ով (ո)ք ուտէ ա(ստուա)ծ ողորմի ասելոց եւ աշխատաւոր(ա)ցն: Ուտողքն, պաշտօն պատ(ա)ր(ա)դողք եւ, ն(ո)ց(ա) տղօթիցն մասն եւ բաժին առնելոց է: Դ(ա)րձե(ա)լ սիրելի որդի, այդոյն չորս բոլորն մասն անկես, ա(է)ր առաջնորդէ յերբ հանի թալվար լինի չորս բոլորն: Լուեալ էք մեր տեղոյս զըրամն որ մեզանէ առեալ են: Տ(է)ր առաջնորդէ, Թօխաթոյ խարսի զբամ եւ ձեր խալթն ուղարկելոց եմ. ա(է)րն ամ(ենայն)ի լիցի ձեզ վարձատրիչ եւ փրկիչ: Ամէն:»

(Հաւատոյ Տարածման Ժողովոյ գիւան Congr. Arm. V. III. F. 20SR.).

Այսպէս ամէն բանէ առաջ նամակս ցոյց կու տայ մեզի համար կարեւորագոյն կէտ մը, այսինքն Սեպտեմբեր 28 1678-ին Յակոբ Ջուղայեցի կը գտնուէր Կարին (Արզուրում): Ուրեմն էջմիածնէն մեկնելէ վերջ տարի մը, երեք ամիս եւ 28 օր վերջ: Բնական է իր այս նամակը Կարին հասած օրը չգրեց, եւ մենք իրաւունք ունինք խորհելու որ ան քանի մը օրէ իվեր Կարին կը գտնուէր:

Ջուղայեցի Կարնոյ փաշայէն իրենն տուած կամ հասցուցած դառնութեան մասին, որուն մասին ինչպէս տեսանք կը յիշէ Եղիազարի զբամ նամակին մէջ, այս նամակին մէջ բան մը չ'ըսեր, միայն նամակին վերջը, կարծես հապճեպ կերպով պարտկել ուղելով, կը գրէ «Լուեալ էք մեր տեղոյս զըրամն որ մեզանէ առեալ են:» Այսինքն «հոս մեր ունեցած զբամը մեզմէ առած են:» Առնողը հաւանաբար փաշան է, որ նեղութիւն տուաւ Ջուղայեցիին: Կաթողիկոսը քանի Կարին կը գտնուէր, կ'երեւի թէ զգոյշ էր իր գլխուն եկածին մասին որեւէ բան գրելէ եւ աւելի թըշնամութիւն հրահրելէ:

Հոս կ'ուզենք հրատարակել նամակ մը, որ առնուած է վատիկանի գիւանէն եւ բնագիր չէ, այլ լատիներէն թարգմանութեան մը արդի հայերէնի վերծանումը: Մենք զանց կ'ընենք նամակին սկզբնամասը: Նամակը ուղղեալ է «մեր հոգեւոր եւ սիրելի որդւոյդ» Առաքել վարդապետի (Արքեպիսկոպոս Նախիջեանի): Այս նամակին մէջ իբր թէ Յակոբ Ջուղայեցի կը գրէ:

«Արդ այս աստուածատուր օրհնութեան հետ, գիտցիր ով հոգեւոր սիրելի զաւակս, որ, երբ մեզմէ բաժնուեցար, մենք վրաստան գացինք. եւ երբ հոն էինք, Երեւանի Խանը կամ Փոխարքան մեզի զրկեց աղա մը. որպէսզի Երեւան վերադառնայինք, սակայն չուզեցինք իր քով վերադառնալ: Շարունակելով մեր ճամբան, հասանք մինչեւ Բակաչուխ, եւ այն տեղէն մտանք Դադիան, որպէսզի Սեւ ծովու վրայով Խըրիմ հասնէինք: Սակայն մեզի անկարելի եղաւ անցնիլ, որովհետեւ Գանձակի մէջ մեծազօր թուրք մը ըմբոստացած էր: Ջայն նուաճելու համար երկու փաշաներ որոշած էին, այսինքն Ազամ փաշան մէկ կողմէ եւ Տրապիզոնի փաշան միւս կողմէ, որոնք այդ երկիրը այնպէս շրջապատած էին ծովէն, որ նոյնիսկ թռչունները չէին ուղեր անցնիլ: Այս պատճառաւ նաեւ մենք ստիպուեցանք վերադառնալ դէպի Ախլայխա, որպէսզի Տրապիզոնի ճամբով անցնինք Եւրոպա: Այն ատեն Կարնոյ փաշան լսելով մեր մասին